



ԲԱԺԱՆՈՐՈՒՄՈՒ ԿՐԻՄԻԱՆ
 ուղիարիտի համար
 Տարեկան 12 մր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասահմանի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ավերիկայի համար
 Տարեկան 3 մր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Պատկերահան սուր առաջին
 երևիկն համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի համար
 20 սանթիմ է. երկրորդ
 անգամի սկզբնական համար
 20 ՕՊՈ զեղջ կրչայ:

Պուղարիտի համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՄԻ

R. P. Kalémcarian
 Mechitaristangasse W. 4
 Vienne
 (Autriche)

Նամակի և դրամի դրկեր
 Արսասահմանի համարի

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Վերաբերելիս ևս չեմ տեսի

Արսասահմանի համար ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՍԻՆ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՆԱԲԱՆՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹ ԶՈՐԵԲՇԱԿՔԻ ԵՒ ՇԱՐՄԻ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներին. որոնք
 վճարած չեն, կը խնդրենք ան-
 յապաղ զրկել բաժանորդները,
 որովհետև առաջին վեցամսեան
 կը լրանայ. Բաժանորդները պէտք
 է հասկնան որ թերթը ստակով
 կելլայ:

Չ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն
 ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ
 Յակոբ Ծերոնեանի

Կը ձուլէ ամէն լեզուէ տպագրական
 տառեր, մասնաւորաբար Հայերէն և
 թուրքերէն:
 Էպպա, քատաթ, էնթերլիններ,
 գիծ և քանդակներ:
 Գինները յոյժ գիւրամասնի:
 Հասցէ՝
 Agop Dzerounian
 (Bulgarie) Sophia

**ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ
 ԴՊՐՈՑՆԵՐԸ**

Վառնայի մէջ գոյութիւն ու-
 նեն ազգային երկտեղ վարձարան
 և երկու մասնաւորներ: Այդ ե-
 րեքի մէջ ստորում են շուրջ
 չորս հարիւր երկտեղ մասնակներ.
 բայց, դժբախտաբար, երեքն
 էլ անապահով վիճակի մէջ են.
 ընթանում են նախալով թէ նի-
 թապէս, թէ բարոյապէս և թէ
 մտաւորապէս:

Եւ շատ բնական է, որովհետև
 Վառնայի մէջ այնքան հայ չըկայ
 որ կարողանայ երեք հաս. փոքր
 ինչ տանելի վարձարան պահել.
 մասնաւորն որ եղած հայութեան
 մեծամասնութիւնը կազմում են
 չքաւորները:

Անկեղծ ասած, մենք սկզբուն-
 քով դէմ ենք մասնաւոր վարձա-
 րանների գոյութեան, Վառնայի
 պէս փոքրաթիւ հայ բնակչութիւն
 ունեցող քաղաքների մէջ. եւս
 առաւել դէմ ենք, երբ տեսնում
 ենք թէ՛ այդ մասնաւոր վարձա-
 րանները կամ միմիայն հայ ճա-
 րելու համար են պահվում, կամ

թէ սխալ կրթութիւն են տալիս
 հայ մանուկներին:

Ամեն մի հիմնարկութեան ձա-
 պիկ զեկավար կարող է իր հիմ-
 նարկութիւնը մի ժամայ մէջ
 փայլեցնել, ներկել, ամենահա-
 սարակ ներկով, որի ներկած
 լինելը գոհհիկ հանդիսականը
 չէ կարող հասկանալ ու նոյնիսկ
 կը ոգեւորուի. բայց այդ դեռ
 չէ նշանակում թէ հասարակու-
 թեան բանիմաց մասը պէտք է
 անտարբեր մնայ աչք ծակող
 հասարակական տխուր պատկեր-
 ների առջեւ:

Մասնաւոր վարձարաններին
 սկզբունքով դէմ լինելով հան-
 դերձ, մենք շատ ուրախ պէտք է
 լինենք թէ Վառնայի այդ տեսակ
 հիմնարկութիւնները իսկապէս ի-
 րենց դրականութեամբ աւելի
 բարձր լինէին, քան թէ ազգային
 վարձարանները: Իայց մեզ հա-
 մար գառն իրողութիւն է որ այդ
 առաւելութիւնը չունեն, թէեւ
 այդ մասնաւորներից մէկի «Հայ-
 կական կրթարան»ի ծրագրի մէջ
 «խոշոր խոշոր» բաներ կան. ու
 դպրոցական հանդէսները կա-
 տարվում են յունական ուղիւղի-
 ական խաղերի ձեւով...:

Իայց ո՞վ է մեզաւոր որ մաս-
 նաւոր կրթարանները գոյութիւն
 ունեն և կարողանում են նոյնիսկ
 այդպիսի խախուտ հիմերով ու
 սխալ ընթացքով տեւողական
 լինել: Վառնայի ազգային մար-
 միները: Ինչո՞ւ. որովհետև
 չեն կարողանում ազգային վար-
 ժարանին այնպիսի գիրք տալ,
 որ նա կարողանար որոշ բարո-
 յական և մտաւոր կրթութիւն
 տալ մանուկներին ու նրանց ծը-
 նողների վաստակութիւնը գրա-
 ւել:

Այսօր Վառնայի մէջ դէմ յան-
 դիման կանգնած են երկու տե-
 սակ կրթական հաստատութիւն-
 ներ. մասնաւոր և ազգային.
 Երկու տեսակն էլ խախուտ են,
 անապահով և անբաւարար: Գը-
 րանցից պէտք է յարատեւ այն,
 որը աւելի համապատասխան կը
 լինի իր կոչմանը. Մեր ջերմ
 ցանկութիւնը է որ ազգայինը
 յալթող հանդիսանայ, «բարո-

բոյապէս», «բայց ոչ անարժան
 միջոցներով». իսկ եթէ Վառնա-
 յի հայերը անկարող են իրենց
 ուսումնարանները արժանաւայել
 և օգտաւէտ գիրքի հասցնել,
 բնական է որ կը ցանկայինք
 մասնաւորների յաջողութիւնը:

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈՒՍ, 30 Յունիս

Բերայի միթէսարիֆը. էնվէր
 պէյ, սասկելէս քանի մը օր ա-
 ռաջ՝ իր հալածած հայերէն մին
 քովը կը կանչէ և կըսէ. «դուն
 գէշ գէշ մարդերու և կասկածելի
 անձերու հետ կը տեսնուիս...
 չը պիտի տեսնուիս անոնց հետ...
 լաւ լա՛ւ... Պիւլպիւլեանի հետ:
 Ան կասկածելի մէկն է, խաբեց
 կառավարութիւնը. 3000 ոսկի ա-
 ռաւ և Բարիզ անառակ կիներու
 հետ կերաւ իբր թէ գործ մը ը-
 նելու համար ու հիմակ ալ դեռ
 եւս կուզէ նորէն մեկնիլ նոյն
 պաշտօնով արտասահման... բայց
 ես անոր գլուխը պիտի ճզմեմ.
 Անոր հետ չի պիտի տեսնուիս:

Չի պիտի տեսնուիս Սպանոյ գր-
 եանի, Մելիքեանի և այլն ան-
 ձերու հետ: Ատոնք ամէնքն ալ
 կասկածելի մարդեր են. կառա-
 վարութիւնը խաբեր են ու կը
 խաբեն:

Աս ինչ գէշ աշխարհ է. երէկ
 աս մարդերը կառավարութեան
 գործիքներ էին, անոր պաշտօ-
 նական լրտեսներն էին, իսկ
 այսօր ատոնք ամէնքն ալ կաս-
 կածելի են կառավարութեան ա-
 ռաջ...:

Յունիս 23 ին երիտասարդ
 թիւրքերու տարածած շրջաբե-
 րականը գիտէք արդէն անշուշտ.
 հիմա ատ պատճառաւ հայերը կը
 տուժեն:

Այդ շրջաբերականը տեղական
 տիպլումիթի մարմնոյն վրայ ոչ
 մի տպաւորութիւն գործեց. իսկ
 Համիտ առիթէն օգտուեցաւ և

հայերու վրայ կը նետէ, «ատ
 թուրքերու գործը չէ, հայերն
 են ըրեր թուրքերու անունով»:

Համիտ կը վախնայ իր երէկ-
 եան վստահելի լրտեսներէն, իր
 Պիւլպիւլեանէն, Սպանոյարէն,
 Ներսէսէն, նոյնիսկ Տիրան պէյ
 Տատեանէն. կուզէ անոնց վրայ
 հսկողութիւն նշանակել: Կամ
 աւելի ստալը՝ թուրք լրտեսներ
 ու պաշտօնեաներ՝ նախանձելով
 այդ հայ յուզաներուն վրայ՝ կու-
 զեն անոնց տեղերը բռնել: Ու
 միակ միջոցը կը գտնան Համիտի
 հիւանդ երեւակայութիւնը շփո-
 թել, նոր շրջաբերականը տե-
 ղական հայ «բարձր յուզաներու»
 վրայ նետելով, զանոնք կասկա-
 ծելի ներկայացնել:

Ու այսօր Պիւլպիւլեան և Սպան-
 ոյար «գէշ մարդ» մակդիրը կը
 ստանան էնվէրի մը պէս հրէշէն...
 և Տիրան պէյ, Արթին փաշայի
 «երիցս երանեալ» «աւարայրի
 սոխակ» զաւակը, որու շափ ա-
 պուշ, աղտոտ ու եսական զաւակ
 ոչ մէկ մայր ծնած է՝ նոյնպէս
 հսկողութեան տակ է: Գացէք
 Բանկալթի, Հարպիյէի դպրոցին
 դէմը եղած իր տան շուրջերը
 քննեցէք. լրտեսներ կսպասեն:
 Մինչդեռ Տիրան պէյ կերպզեր
 պաշտօն ստանալ, երթալ ժնէվ,
 Գաշնակցականները համոզել...
 նպատակը նորէն ստակ կորզելն
 էր և ոչ ծառայութիւն մատու-
 ցանելը:

Օգոստոս 19ը կը մտենայ, Հա-
 միտի գահակալութեան 25ամեակը
 պիտի տօնուի. ատոր համար ալ
 ձերբակալութիւնները շատցած
 են:

Հայերու քաջածր ծանր է,
 խիստ ծանր, իսկ խեղճ թուր-
 քերու քաջածր ալ մերը մուցնել
 կուտայ: Օրը հարիւրներով կը
 ձերբակալուին, կաքտորուին, կը
 կախուին, կը խեղդուին ու կը
 թունաւորուին:

Թուականէս երեք օր առաջ
 Բերա էի: Թէփէ-Պաշիի պարտէ-
 զին քով երկու քանոն (զինուո-
 րական ոստիկաններ) բռնեցին

աղուոր կերպարանքով ու լաւ կազմով զինուորական երիտաւարաց մը, կառք մը նետեցին և ականջովս լսեցի «Երբեք զնախի հրամանը ժամը երկուրք անցած էր (Թրքական), մութն էր՝ չը կրցի որոշել՝ արգեօք դպրոցակա՞ն մըն էր բռնուածը, թէ սպայ մը:

Խուզարկութիւններն ալ անվերջ են. ուղիղ շորս օրէ որ գրաքննիչ ատենանէն Ջարեհ Էֆէնտին և քանի մը փաթեցաւորներ կը պատին հայ-թուրք գրախանութիւնը, գիրքերը կը նային և հազարներով հատորներ կաննեն կը տանին: Հայ գրաւաճառէ մը երկու հատ հայոց պատմութեան դասագիրքեր են տարեր. իսկ թուրքերու խանութիւնը համարեա թէ կը պարպեն:

Կը խուզարկուին նոյնպէս կազմարարներու խանութիւնը:

Մէկ խօսքով պատրաստութիւն կը տեսնան օգոստոս 19ի համար:

Ազգային շրջանակնիս լուռ է. ինչպէս եղանակը փոթորիկէն առաջ:

Օրման ու ներքին անշուշտ ծրագրերն կը խորհին օգոստ. 19ին սեւ օրը Համիտին աւելի հաճելի երեւնալու համար:

ԲԱԺ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԸ

Եղբորդութիւններու, սիրագործութիւններու, հարստահարութիւններու վիպական արձագանք մըն է որ՝ կուգայ ճիշդ այս միջոցիս Հայաստանի խորքէն—նոյնիսկ Տարոնէն:

Հայութիւնը մեծ վտանգի մէջ է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑԿԵՐ ՊԱՏԵՐԱՉՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵ ԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԵՍԳՈՒՄ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ա.

Մինչև ցարդ Մշոյ աշխարհի մէջ պատահած անցքերն պատերազմէն առաջ ու յետոյ, կենդանի ապացոյցներով բաղդատութեան գնելով տեսանք թէ՛ թիւրք կառավարութիւնը, պատերազմէն առաջ գէպի իր հպատակ քրիստոնեայ տարրն տարրեր ու որոշակի ուղղութեամբ մը կը վարուէր, եւ հարիւրէն 90ը այդ տարրի իրաւունքները կը պաշտպանէր, առաջնացութեան քայլերուն իսկ խոչընդոտ չէր հանդիսանար. եւ այսպէս ներթափանցէր կը յառաջադիմէր ամէն տեսակէտով. դպրոցներու բացումներ, երկրագործութեան տակաւ առ տակաւ կերպարանափոխ-

տարարող ժողովուրդը՝ 95ի կոտորածէն ի վեր կը սագնապի եւ մահու ու կենաց մէջ կը ստարտ բերուի. եւ ահա այս պոստալի աղաղակն է որ կը հասնի մեզ վերջին թղթատարով մեր ստացած մասնաւոր նամակներէն. որուն ընթացումով չէ կարող չը վրդովուի ընթացողը եթէ անոր մէջ մարդասիրական եւ հայրենասիրական զգացումը չէ մարած առկաւին. եւ ամէն սնունք որ կը հաւատան անոր ԱՊԱԿԱՅԻՆ:

Տարիներէ ի վեր հաստատուած սովորով որուն գոյութիւնը «կարմիր գազանին» հայութիւնը Հայաստանէն արմատախիլ ընելու իՍԿԱՊԷՍ ըմբռնած ծրագրերն էին մին է. որք օրին աւելի աճելու եւ ընդհանրաւորու վրայ է:

Կոտորածներէն, կոտորուածներէն վերջ ժողովուրդը կորուց ամէն ինչ. իր կենսականութիւնը ապահովող լծվար գոմէջը եւ եղը չկային այլեւս. վարելու, ցանելու էական գործիքները յափշտակուած էին. հայ երկրագործը—արհեստաւորը զրկուած էր ամէն բանէ. . . . Ծառեր իրենց վերջին ճիգերը թափեցին եւ պապենական ՕՃԱՍԻՆ գոյութիւնը ապահովելու համար, թուրք—քուրտ եւ երբեմն ալ հայ վաշխառուներու զիմեցին. փոխ գրամ եւ սերմնացու առին արժէքին կրկինը տալու պայմանաւ. արդիւնաբերութեան (Կալի) ժամանակ:

Եկաւ արդիւնաբերութեան ժամանակը. երկրագործն՝ ամբողջ տարուան շարքաչ գողութիւն արդիւնքը վաշխառուին տալէն վերջը, դարձեալ պարտական մնաց: Եւ այդ արդիւնաբերած հացէն իրեններուն գոնէ մի ամսեայ ուտելիք չկրցաւ տուն տանիլ եւ դարտակ ձեռքով խոփն ու արօրը բռնած՝ զխիկոս տուն վերագարձաւ:

Ստիպեալ նորէն զիմեց վաշխառուին գործնի փոխարէն ԿԸԼԿԻԼՈՎ ապրիլ յանձն առաւ. այս ալ չկար՝ մտրալով. . . պարտքով. մէկի փոխարէն երկու սակարին կրկին տուկոս կանցնէին պայմանաժամերը. պարտաճորհակները կրկին եւ կրկին կը փոխուին. . . արդիւնաբերութիւնով ալ անկարելի էր պարտքի

ուելն ու առաջ երթալն, վաճառականութեան լայն ծավալ առնուլը Առեւտրական ասպարէզ ամէն անհատի առաջ բացէր. ի՞նչ ազդիւն էր՝ կրօնի որ պատկանէր. թիւրք տարրի մէջ դարաւոր արմատացած գաղափարութիւններ հեղափոխէր օրէնքի խստութեան պատճառաւ կը վերնար, գոզութիւնները ու մարդասպանութիւնները կը սահմանափակուէին: Երջուրն յաւրս չստրոբի (սեւ վրան) ներքեւ ապրող քիւրտ աշխրհներու բարձրութիւն՝ ապացոյցներ էին կառավարութեան գէպի քրիստոնեայ տարրն ու է սխեմութիւն յունիւնալուն:

Իսկ պատերազմէն յետոյ. այդ օրէնքներն ու կանոններն այլեւս անպէտք համարած, մէկ կողմ նետելով տարրեր եւ որոշ ծրագրաւ մը սկսաւ առաջ ընթանալ. իր կայսրութեան վտանգ պայտանացող հակառակ տարրին քակելու ու քանդելու միջոցներ ձեռք առնելով, միմիայն իր կայսրութեան ապահովութեան դարման այդ ընտրելով, եւ այդ ուղղութեամբ սկսաւ ճանապարհ ելլել. իր հայաջինջ ծրագրերը առաջ տանելու համար նորանոր պաշտօնեաներ կարգել սկսաւ. եւ այդ քակիչ ու քանդիչ ծրագրաւ բեռնուած պաշտօնեաներն

հասուցումը: Անգութ վաշխառուն այլեւս չգոհացաւ միայն կալի բերքովը որ իր պահանջին արժէքին տասէն մէկը չէր: Յափշտակելով իւրացուց ունեցած արտերը եւ պարտեղները իր քմածին խղճի գնահատումովը տասնի արժէքը մէկի իջեցնելով: Այսօր երկրագործը դասակարգին մեծ մասը իբրեւ մարտապարզուներին զրկուելով իրենց դարաւոր իրաւունքներէն:

Մէկ կողմէն վաշխառուն, միւս կողմէն կառավարութեան «թանախիտարները որոց գործադրած անասունի բարբարոսութիւնները. . . չէ կարելի քանականութիւն ունեցող կենդանի արարած մը տանիլ բայց եթէ սարկացած հայերը:

Սմէն բան սպանեցաւ. ձեռքը եղած բոլոր ունեցածը չուներցածը յափշտակեցին հարկահաւաքներու վայրագ քարկուծիկներ մարակներու խաբարաններու. տարաքի մըն է որ կը տեղայ խեղճ զիւղացիին զլիւտն, այն ալ իր տան մէջ, բնտանեացը եւ զաւակացը առջեւ. այս ամենէն վերջ մարագները կը քակեն եւ գերանները կառավարական տուրքի փոխարէն կը գանձեն:

Ահա՛ դարավերջի մօտան, Համիտ—Օրմանի աշխարհապոկի վերջին արարուածին շնորհիւ ներկայ եւ մնացական պախի տուրքերը խստութիւ կը գանձեն. ճիշդ մեր յիշած դրութեամբ:

Եւ ի՞նչ ընել հարկ է այս ամենու փոխարէն:

Ու դուք աճան ազգասէրներ, դուք որ օտար երկիրքի տակ ճորտանական ոտատնին մէջ աշխարհի ամենագեղեցիկ քաղաքին «Բարիզ» մէջ, հայրենասիրական գիմազի տակ, ձեր կոշիկներէն վեր խելագատակնուող փշածին համեմատ ողբեր, քննադատութիւններ կընէք, սխալներ. . . կուղղէք. հայրենիքի կացութիւնը ապրած միջավայրնուց համեմատ բաղդատելով անտեսական եւ մտաւորական դարգացում կը պողած, բան մը որ ամենայնպէս տիրացուն անգամ չպիտի համարձակէր ըլլու:

Այդ ամէնը կընէք, եւ պիտի բնէք կարողութիւնները ներածին համեմատ ինքզինքնիդ ազգասէրներ ներ-

կայացնել ժողովրդի միամիտ եւ խաւար դասակարգին:

Ոչ պարոններ, ձեր այդ Երեմիական ողբերգութեան ժամանակը անցած է. եւ հայ ժողովուրդը ձեզի եւ ձեզի պէս շարուածներու որակը եւ քանակը իր նժարին մէջ կշռած է. . .

ՀԱՄ.

Իզմիր, 28 Յուլիս

Յ. Գ.— Մեր մայիս 25 թիւ «Իզմիրի ժանախտոր» վերնագրով յօդուածը վերապահութեամբ հրատարակելու իրաւունք ունիք որովհետեւ 5 օրուան քարանդինան 11 օրի բարձրացաւ. եւ եւրպական թերթերու տարածայնութիւնը մասամբ իրաւացի էր. մինչդեռ «Էփեսոս» Հէրալդի Իզմիրը թղթակցող մեզ համակարծիք է որուն մայիս 30ի թղթակցութեան մէջ պաշտօնական դաւմը ըլլալը երկրմանքի ձեռով կը ներկարագրէ. կուզէի հոս մի քանի կէտեր յիշել բայց ժամանակս չի ներուտն առիլ չարժեք այդ նիւթին վրայ ծանրանալ:

Իսկ ժանախտի գոյութիւնը անաւասիկ այս է. 60—70 օր է որ բարձրական (պաշտօնական) յայտարարութեան 13 հոգի վարակուած է որոնց 3ը մեռած եւ միւսներէ ոմանք ապաքինած եւ ոմանք այ ապաքինելու մօտ են. թուէս մի երկու օր առաջ փողոցները կառավարութեան կողմէ մի ալը փակցուած էր. ես ինքս կարգացի որուն մէջ կը գրէ կարծուած հիւանդութիւնը ժանտախտ չէ եւ տակաւին չէ հասկցուած ինչ տեսակ հիւանդութիւն ըլլալը. . .

Վնասը խիստ մեծ է. ու հետեւանքը ծանր. ցերեկ ժամանակ աւաղակութիւններ կը ըլլան միշտ. . . . Բայց քարանդինան տակաւին 10 օրէ վախճանը յայտնի չէ:

Նոյն

Ն Զ Ի

Սեպտեմբ. 28 թիւ հեռագրէն, գիտէ ֆերանտերէն, հայերէն, եւ տաճկոնէն գրաչարութիւն ով որ կուզէ թող հաճի իրեն նետ քանակցիլ, հասցէն է «Կայսրէթ թերթի խմբագրութիւնը»:

—)(—

Եւ միանգամայն պարտաւորեցաւ իր ամէն ինչ որ կը գտնուէր տալ եւ առնուլ դայն: Սոս չինք զլանար օրինակ մը մէջ բերել: 1880 թուականներուն իմուաւ գաւառի Տուսան հայ գիւղին մէջ. օր մը քիւրտին մէկը, պէրտանկայ մը իր ձեռքը բռնած, գիւղի փողոցներուն մէջ կը պտտցնէր ծախելու. բարեկեցիկ հայն կարեւորութիւն չը տալով վրան իսկ նայիլ չուզէր. նոյն միջոցին, յիշեալ գիւղի ամենէն աղքատը—Պետո առնուելով մէկը—վրան հասնելով, առանց վարաման, սակարկութեան կը մանէ, ու քիւրտին կրսէ սերկուկով եւ եօթը ոչխար ունիմ, կուղէք երկու կովը առէք կամ թէ եօթը ոչխարն իր գաւանդով ընդունելով պէրտանկան 37 փամփուշտներով ինձ տուէք: Գիւրտը հա՛ւաճայնութեան գալով եօթը ոչխար կառնէ պէրտանկան 37 փամփուշտներով մէկտեղ կը յանձնէ: Ի՞նչ տեսնելով գիւղացիք, խեղճ աղքատ Պետոն կսկսին ծաղրել, նախատել, եւ այն աստիճանին կը հասցնեն. որ այլեւս Պետոն կը հարկադրուի գիւղական սենեակներ չը յաճախել եւ այսպէս երկու երեք ամիսներ անցնելով, աշխան մ.ւ.թ ամպամած գիւղեր մը, քիւրտ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԳԷՍՆԵՐ

Վառնայի ազգային երկսեռ վարժարաններու և Հայկական կրթարանի հարցաքննութիւնները և հանդէսները վերջացան: Այդ հանդէսներու մէջ ամենէն ուշագրաւը մանկապարտէզներու մանուկներն էին թէ ազգային և թէ մասնաւոր վարժարաններու հանդէսները տեղի ունեցան եկեղեցիին և վարժարանին մէջ. համաստրէն, ինչպէս և վայելէ ազգային հաստատութեան մը, իսկ հայկական կրթարանին մասնաւոր սրահի մը մէջ:

Հայկական կրթարանի Տնօրէնը, Տ. Կրօն Միջադէպի աշխատած էր իր գաղտնի հանդէսին առանձին փայլ մը տալ, ինչպէս առհասարակ կընեն ամեն մասնաւոր վարժարաններու տնօրէնները. բայց փայլին հետեւելու իր այդ ձգտումը չափէն անցուցած էր: Տ. Կրօն Միջադէպի աշխատող մարդ է, չի ուրացուիր, սակայն արտաքին փայլի իտեւէ շատ կը վազէ. իր անձով շատ, չափէն աւելի շատ կը շարժուի, ու կուզէ զբաղեցնել հասարակութիւնը: Ամէն պարագայի մէջ հանդիսաւոր կերպով իր անձը կը որակէ հրապարակաւ... մոռնալով որ այդ տեսակ յայտարարութիւնները հասարակութեան բանիմաց դասակարգին վրայ գէշ տպաւորութիւն կը գործեն: Նոյն հանդէսին մէջ գեղեցիկ իրողութիւն մը տեղի ունեցաւ. մանկապարտէզի տղաքներէն չորս հոգի՝ հայ որբիկներու համար սկսան դժամ հաւաքել հանդիսականներէն, որոնք, զժբազդաբար, այնքան ալ առատածէն

չի գտնուեցան: Սիրունիկ և բարի մանուկները այնպէս վարձատրեցին, ինչպէս կը վարձատրեն շանթաններու երգիչները և երգչուհիները, առանց մտածելու որ դիմացիները հայ մանուկներ էին, և ստակ կուզէին միւր արիւնալալ երկրին մէջ անօթի մնացած փոկրիկ որբիկներուն համար:

Ունկնդիւր

ԱՆՊԱՏԿԱՌՈՒԹԻՒՆԸ

Հակառակ իմ օրինաւոր պահանջքիս, Հուգոյի մարդը անարդ զրպարտչի դերը ստանձնած հայհոյանքով կը պատասխանէ: Այդ «ալիմալը» իմ գործած խարդախութիւնս ապացուցանելու, իբր փաստ իրեն նման չէզոքի մը հնամուշ ու կարկտած գրութիւնը, իր պառաւական սպանալիքներովը միասին մէջ կը բերէ մի քանի հեղինակաւոր անձերէն հաւաքած վկայութիւններով: Եթէ ստոյգ է, ինչո՞ւ այդ անձերը իրենք այդ ամէնը ճշգրիտ կուշանան. ինչո՞ւ մէյտանը մէկը չկայ: Քահանան բեմէն կը յայտարարէ թէ ընտրութիւնը անվաւեր սեպուած է ի՞նչ ի՞նչ օրինակներով ինչո՞ւ պատահած ըլլալուն համար, նոյն իմաստով ալ տեղեկագրուեցաւ ընտ. ժողովի կողմէ Այցելու Հովիւին: Ընտրութիւնը զո՞հ եղաւ ստոր էնդրիքներուն ու սեւ կրքերու, Յ1 ձայներէն մին ազայի մը քով ծառայ ըլլալով, իր հայրենակիցներու հետ սուած որոշումը դրժեց, ճնշուելով իր տիրոջմէն:

Յ1 մշտնիւրու ձայնով երբէք կեղծութեամբ իմ կուսակիցներս ընտրել տալու նպատակ չեմ ու-

նեցած, որովհետեւ ատենք իմ հայրենակիցներս ու կուսակիցներն էին: Ընտրութեան յաջողութեան ալ լիայոյս էի, ինչպէս որ փորձը ցոյց տուաւ թէ առջի և թէ նոր ընտրութեան քանդիտաները միեւնոյնբը ընտրուեցան, որոնց և ոչ մին կուսակցական է:

Իսկ վարի պաշտօնաթուղթը՝ թուքովս միասին Գուրպէթեան անուն արարածին կը նետեմ որ իր փոխածը լրգէ ու իր միթասեան ակնշնորը լաւ սրէ: Եթէ երբէք այդ հաստ երեսը շիկնելու յատկութիւն ունի:

Ոչ թէ իր արգարացնելու համար այս կընեմ, այլ ժողովրդին համոզել տալու համար որ ճանշնայ հայհոյիչը ու զրպարտիչը: Մարդկութեան նողկանքովը ապրող արարածին հետ պատիւս թոյլ չի տար չափուիլ, որովհետեւ բանակիւր միայն հաւատարմութիւն հետ յարգելի է:

Այդ ետզմայի վարցալը «ցեխի գործարան» անուանած էի, որովհետեւ այդ խարդախութեան անկողնակալութեան զիմակի տակ եղած գործարանէն միայն հայհոյանք ու ցեխ արտադրուած է:

Թ. Պ. Ա. Կ. Ի. Յ.

1900 Մայիս 21ի կատարուած թաղ. Խորհրդոյ ընտրութեան ժամանակ Ծարժու մի Սօփիայի թղթակիցին կողմէ ո՞ւր է խարդախութիւն ի գործ դրուած չէ. ընտրութեան բեկանման պատճառը իր անձին հետ ո՞ւր է անշուքիւն չունի:

Նախագահ ընտ. ժողովոյ Արխաստիս Գրեյ. Ֆեւրեան ի Դիմաց ընտ. ժողովոյ Ասենազպիր Ասենապետ Տօփր. Ս. Գիւլիսիեան Մ. Արժուակի Սօփիա, 28 Յունիս 1900

—)(—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ինչպէս յայտնի է ճարտարապետ ընթերցողներուն՝ անցեալ տարի Պուլիարիոյ զանազան քաղաքները ընկող հայերու մէջ, Հաստատունի մեր սովատանջ որբ եղբայրներուն օգնութեան ձեռք կարկառելու համար ընդհանուր փութկոտութիւն մը կար. Սօփիայի մէջ ալ խումբ մը երիտասարդներ միանալով ըլլալիք հասոյթը վերոյիշեալ նպատակին յատկացնելու պայմանաւ նուազահանգէս մը կազմակերպած էին, որ մեծ յաջողութիւն գտնաւորով 60 ոսկիի չափ զուտ արգիւնք մը գոյացուցած էր: Արգիւնքի մը ժամանակէ ի վեր հոստեղի ժողովուրդին մէջ ստոյգ աղբիւրներէ բխած լուր մը յամառութեամբ պտտելու վրայ է, լուր մը որ մեծ յաջողութեամբ պատճառած է: Այդ լուրին նայելով տեղւոյս քահանան որբերու յատկացեալ 60 ոսկիին (50էն 100 լէվի չափ) նուիրատուներէ գանձելով, պատրիարքարան զրկելու համար, մինչեւ այսօր նուազահանգէսի յանձնաժողովին դարցուցած չէ: Յանձնաժողովին անդամներն ալ թաղական խորհրդին ներկայացուցած հաշուեցուցակին մէջ քահանային հաշույն անցուցեր են այդ գումարը, որովհետեւ համոզում գոյացուցեր են որ Տէր հայրին կոկորդին խորհէն այդ գումարը գուրս քաշելը գիւրութեամբ կատարուելիք գործողութիւն մը չէ:

ՈՄՆ

Սօփիա, 3 Յուլիս

—)(—

գողերն՝ Պետոսի տան կտուէն ծակելով, երկու կողմ գողնալով կերթան: Երես մը կիմացուի. Պետոս իր հրացանը ուսն առած կտուէն կիմաց, հասնելով կուռ կը բռնուի. այդ միջոցին քերտերը Պետոս երկու կողմ ձգելով կը փախչին. Պետոս իր կովերն առնելով յետս կը վերադառնայ. ու կսկսի զիւղացիները նախատել առարկելով թէ՛ եթէ հրացան ձեռքս չունենայի, երկու կողմերս պիտի տանէին: Այդ տեղէն գիւղացիները օրինակուելով կսկսին զէնք առնել. և կարճ ժամանակամիջոցի մը մէջ մեծ մասամբ կը զինուին:

Այսպիսով նոր կրթութիւններով օժտուած երիտասարդաց տուած գաղափարներն ու գործնականագէտ աւանդուած գասերն հայ գիւղացին ամենայն սիրով ընդգրկեց. ու սկսաւ հետեւել անոնց: Արիւկական ուղին որ դարբնու հոյովմամբ իրենց սրտին թափաւորած էր. կարճ ժամանակամիջոցի մէջ մէկ կողմ թողելով. այլևս ասպետական սիրտ կրել սկսաւ. պապիական ձգուած արքա ու գուրթան ժամանակութիւնը՝ որը սրտով ու հոգով կապուած կը մնար անոնց հայ գիւղացին, իրենց նշանակութիւնը կորսնցուցին. նա ա-

ռաւել կարեւորագուցնին վազեց. իբրև մարդ ապրելու ու իր գոյութեան պահպանումն ատոր մէջ նախատեսելով. ու ստի այդ առթիւ ուխտեց մինչեւ գերեզմանի սեմը հաւատարիմ ու անբաժան ընկեր մնալ անոր:

Արդ, տաճիկ կառավարութեան հայաջինջ բռնած ընթացքը, և հայ ժողովրդեան իր գոյութեան պահպանման միջոցներու դիմելը, վերոյիշեալ Մշոյ աշխարհի անցքերու շարքին մէջ, երկարօրէն ի վեր հանելով տեսանք և համոզուեցանք թէ՛ չէ ի՞չ արտասահմանի ինքնաճանաչ ազգասէր հայութեան կողմէն թելադրուած տաճիկայն սկսաւ յիշատիութեան փարիլ ու մասնակի շարժումներու և կազմակերպութեանց հետեւիլ. այլ անվերջ ու անսահման ճնշումներով, հարստահարութեանց, մարդասպանութեանց ու առեւանգման տիրուր գործքերն ու արձագանք ստիպել տուին տաճիկահային բնական օրէնքի պահանջմամբ ընթանալ. միմիայն իր գոյութեան պահպանումը զէնք կրելու ու յեղաշրջուելու մէջ նախատեսելով, նա անհրաժեշտ պարտք համարեց մտնել այդ փըրկարար ուղին, ինչպէս որ ամէն

ճնշուած ու հարստահարուած ազգերը այդ ուղիով ընթանալով, յաջողած էին իրենց նպատակակէտին հասնիլ:

Սակայն, խումբ մը քննադատական հովիւր առնող պարոններ, կեղծ զիմակի ներքեւ պահուրտած, անձնական գծով հաշիւներէ թելադրեալ երկու երեք տարիներէ ի վեր հրապարակ իջնելով, իրենց շառաթանական պողտուկներով այս և այն կուսակցութեանց վրայ անտեղի յարձակումներ գործեցին. և կը գործեն, ձախող հանգամանքներու ամբողջ պատիւանատուութիւնը «Հնչակ» և «Դաշնակցական» կուսակցութեանց վերագրելով. մինչդեռ տաճիկահայն 1880—1 թուականներէ սկսեալ իր ստաջին քայլը կոխած էր յեղաշրջեալ վիճակի մէջ. այդ միջոցներուն թէ «Հնչակ» և թէ «Դաշնակցական» կուսակցութիւններն ոչ գոյութիւն ունէին և ոչ ալ մարդս կրնար իրականագէտ հաստատ համոզում մը գոյացնել, թէ, այսպիսի երկու կուսակցութիւնք մի քանի տարիներէ յետոյ ծագում առնելով դուրս պիտի գային որոշում ձրագրով մը գործելու, և միանգամայն ձախող հանգամանքներու ստեղծիչն դառնալու:

հետեւաբար այդ բոլոր գրուածներն ուրիշ բան չեն, եթէ ոչ յիշեալ երկու կուսակցութիւններն ամենաստոր կերպով զրպարտել և ժողովուրդին յուսանատեցնելով՝ հակակրթութեան մը հոսանք տուալ բերել, որպէս զի իրենց թագուն դաւադրեալ նպատակներն առաջ տանելու չափ յառաջդիմէին: Երբէք այդ պարոնները չի մտաբերեցին որ ժողովրդեան ինքնաճանաչ գոտակարգը, չէ թէ այսօր, այլ 1886 թուականներէ սկսեալ իր որոշ և յատակ գաղափարը կազմած է այդ դաւադրեալ նպատակաց մասին, երբէք կարեւորութիւն չի տալով այն «Հայրենասիրութեան Միութեան» ծրագրին, որ իրենց պաշտեցեալ Փօրթուքալեանէ ծագում առնելով դուրս էր եկած, որ մինչեւ հիմա ալ չի կրցաւ իր տղաքութիւնն ի գործ դնել ժողովրդեան ամէն խաւերու մէջ ու ժողովրդակախութիւն շահիլ, բայց քանի մը գիմակաւոր կեղծ ու խորգախ քննադատներէ, ու ժողովրդեան կտուէն ինկած մաս մը վատ, ցածհոգի կրօնաւորներէ:

ՄԱԿԱՐ ՅՈՒՂԱԿԱՆՆԵՐ

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Ժամանակէ մը ի վեր վառնայի իրաւունք թերթին մէջ, կայծ կեղծանուն տակ ծածկուած մէկը անձիս նկատմամբ անստոյգ լուրեր հրատարակ հանած է, որոնց համեմատ ես իբր թէ ք. Պօլսոյ ողբերգին սընտուկին 12 լիբա կը պարտիմ 15 տարուան տուրով, ինչպէս որ ազգային մայր տոմարին 14, 15 կամ 16 երեսներուն մէջ արձանագրուած է եղեր:

Չրպարտութիւնը եւ ստախոսութիւնը իրենց բան գործ բրած այս կարգի արարածներուն թէեւ երբէք պատասխանել իսկ չարժեք, բայց այդ արարածը այս անգամ իմ անունս հրատարակ նետած ըլլալուն, կուզամ ես ալ հրատարակաւ յայտարարել թէ կայծի յիշած իմ իբր թէ ազգին ունեցած 12 լիբայի 15 տարուան տուրով պարտքս բացարձակապէս սուտ է:

Ահաւասիկ, ըսածիս ի հաստատութիւն, քաղաքիս Պատ. Թաղ. Խորհրդոյ այս առթիւ ուղղած նամակիս եւ ստացած պատասխանիս պատճէնները որոնք իմ ազգին պարտք չունենալս կը հաստատեն որոշապէս:

Պետրոս Գ. Պօլսեցիեան

Ահաւասիկ Պատ. Թաղ. Խորհրդոյ գրած նամակիս պատճէնը:

Պատ. Թաղ. Խորհուրդ ք. Պօլսոյ

Վառնայի մէջ հրատարակող Իրաւունք լրագրին մէջ քանի մը անգամներ է իմ անձիս չուրջ գրութիւններ կը հրատարակուին, իբր թէ ես ազգային սնտուկին պարտք ունեցած ըլլամ եւ այն ալ ազգին տան վարձքէն:

Ես ազգին տուններէն եւ ոչ մէկուն մէջ բնակած ըլլալս չեմ յիշեր. ուստի կը խնդրեմ բարեհաճիք ինձ իմացնել թէ ինչ ունիմ ազգային սնտուկին պարտք, եւ եթէ ոչ խնդրեմ պարտք չունենալս հաստատող գրութիւն մը ինձ տալու բարեհաճիք:

Մնամ յարգանք

Պետրոս Գ. Պօլսեցիեան

26 Յունիս 1900

Ահաւասիկ Պատ. Թաղ. Խորհրդոյ ուղղած պատասխանին պատճէնը:

Թաղ. Խորհուրդ

ք. Պօլսոյ

Թիւ 120

28 Յունիս 1900

Ի ք. Պօլիս

Մեծապատիւ Տէր:

Ձեր երեկուան թուակնաւ ի որհրդոյս ուղղեալ գրութեան ի պատասխանի կուզամք իմացնել թէ խորհուրդս քննելով ազգային մայր տոմարը ոչ միայն ձեզ հոն պարտական չի գտաւ, այլ եւ ոչ իսկ ձեր անունը հոն արձանագրուած տեսաւ:

Ձեկուցանելով զայս ձեզ ի պաշտօնէ մնամք

Ի գիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Առաջիկ Վազգեան Յ. Մ. Գանքարեան (Կնիք)

Առ Մեծապատիւ

Տ. Պետրոս Գ. Պօլսեցիեան

Աստ

Յ. Գ. — Ներկայիս մէկ օրինակն ալ զրկուած է Իրաւունքի:

—(—)

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Ամսոյս 25ին արդէն ընտ. ժողովոյ ատենապետ Մ. Գալազեան հեռագրաւ ծանուցած էր քաղաքիս թաղ. խորհրդոյ ընտրութիւնը. այս առթիւ աւելորդ չեմ համարեր ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդել յարգող ընթերցողաց որպէս զի գիտնան թէ ետականութիւնը եւ փառասիրութիւնը երբ իրարու հետ միանան ինչ գորշելի դերեր կը կատարեն: Յունիս 18ին մասնաւոր հրատարակող մը ժողովուրդը հրաւիրուած էր մասնակցել թաղ. խորհրդոյ ընտրութեան որ պիտի կատարուէր 25 Յունիս յետ աւարտման եկեղեցւոյ (և որին մի տեսակէն ևս եկեղեցւոյ դրան պատին վրայ փակուած էր) սակայն, քանի մը խռովարար և եսասէրներ կը առհասարակ որ ալլ եւս քուէից մէջ ու է զեղծում գործարարներով իրենք զիրենք ընտրելի ներկայացնելը անկարելի է (չի նոցա դիմակն արդէն վար ինկած էր) սկսան այս ու այն կողմերը շրջելով կեղծ և շողոքորդ լեզուով համոզել ժողովուրդը որպէս զի նոյն օրը ընտրութեանց երբէք չի մասնակցին որպէս թէ քուէարկութիւնը փոխանակ ըստ սահմանադրութեան, կառավարութեան օրինօք պիտի կատարուի որուն պիտի նախագահէ եղեր կառավարական մի բարձրագոյն պաշտօնեայ ևն ևն. սակայն երբ ժողովուրդը եկեղեցի կուգայ նոցա ըսածներէն և ոչ մին տեսնելով՝ բացի ընտրողական ժողովէն և նախագահ Գ. Մ. Վ. Նալպանդեանէն ուրիշ բան չեն տեսներ. ուստի սիրայօժար իրենց քուէները կը յանձնեն առ որ անկէ, իսկ գըլխաւոր խռովարարք առ յամօթոյ երբէք չեն երեւիր, բացի մէկէն որ նա ալ շատ մը կեղծութենէն վերջ իր գոյնը դուրս տալով մեկնեցաւ... Ժամը երկու քին քուէտուիր բացուեցաւ և բացարձակ քուէից առաւելութեամբ հետեւեալը ընտրուեցան. Մեծ. Տեարք Մանուկ Գալազեան, Յակոբ Գանթարեան, Կարպիս Մ. Յարութիւնեան, Կիրակոս Յարութիւնեան և Թագոյր Հայրապետեան. յետ այնմ ընտրողական ժողովը իր տեղեկագիրը պատրաստելով զրկեց առ Գեոր. Բ. Մ. Վ. Պաղճեանի ի վաւերացումն. տարակոյս չի կայ որ Գեոր. Պաղճեան հայրը ինկատի առնելով գրեթէ շուրջ 8 ամսեայ թաղ. չգոյութիւնը և կարգ մը շահամուլ և եսասէր անձանց դարձուցած ինթրիքները, որոնք առ հասարակ մեծապէս մնասցին Ազգ. շահուց, պիտի փութայ շտապաւ վաւերացնել զայն որպէսզի միանգամ ընդմիջտ վերջ տրուի այս անկերպարան վիճակին. խռովարար պարտնայք չկարենալով կրից յագուրտ տալ, այժմ սկսած են նորանոր մեքե-

նայութիւններ մտածել... գիշեր ցորեկ ժողով կը գումարեն ո՞վ գիտէ ինչ ճիշդութեամբ ինչ կը մտածեն... արդէն տեղադրութիւններն ոմանք քանի մը բաժանորդներու «խաթեր» համար անոնց արձագանք եղած են... ինչ որ ալ լինի վերջապէս ճշմարտութեան գործը պիտի ծածանի արեւի պէս: Քաղաքիս վարժարանի հարցարկները թիւնքաւարտելով տարեկան արձակուրդ տրուած է սանուց:

Ա. Շ.

Թ. Բագարճըք, 30 Յունիս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ճարտնի շինական գեսպանը Բէքիւնէն տեղեկութիւն ստացած է որ շին կառավարութիւնը ամէն միջոց ձեռք առած է օտարականները պաշտպանելու համար:

— Անգլիական թերթի մը ճանկայէն կը հեռագրեն որ երկու շինական նահանգներու մէջ 20000 կաթոլիկ շիներ կատարուած են: Հազարաւոր քուէներ կը յառաջանան դէպի Վէյխալէյ:

— Յունիս 30ին միջազգային ջորքերը յարձակած են Թիէն Յինի վրայ. ապստամբները ես մղուած են, Անգլիացիները 40 հոգի կորուստ ունեցեր են: Երկու ամբրիկացի եւ մէկ ռուս գնդապետներ սպանուած են այդ ընդհարումի միջոցին: Ձիները կռուեր են կատաղաբար և շատ ճշգրտութեամբ հրացաններ կարձակեն եղեր:

— Պեղծիքայի արտաքին գործոց նախարարութիւնը ճանկայէն հեռագիր մը ստացած է, որով կը հաղորդուի թէ շին ժէնէրայ Նիխ Բէքիւնի քովերը յաղթած է ապստամբները իշխան Ձիւնի եւ ժէնէրայ Իւնգլուի օգնութեամբ, որոնք կը ջանան օտարականները պաշտպանել:

— Լի-Հունգ-Նանկ հրաման ստացած է իսկոյն Բէքիւն երթալ: Միջազգային ջորավարներու խորհուրդը առայժմ որոշած է միայն Թիէն Յինը ամրացնել և Թագուի հետ հաղորդակցութիւնը ապահովել:

— Յունիս 30ին ճանկայէն Լօնտօն կը հեռագրեն թէ շին ջորքը և Պօքսէրները շարունակաբար յարձակեր են Բէքիւնի գեսպանատներու վրայ, բայց յաջողած չեն ներս մտնալ: Նիւկ-Պօլ մէջ մեծ խառնակութիւններ ծագեր են:

— Հեռագիր մըն ալ կը հաղորդէ որ շինները կտորեր են Բէքիւնի գեսպանատներու մէջ գտնուածները:

— Թիէն Յինի քով գտնուած շինական զինարանը որ այժմ գրաւած են միջազգային ջոր-

քէրը, Չինաստանի ամենամեծ զինարանն է և շատ ամուր գիրք ունի: Այդ զինարանին մէջ վերջին ժամանակներս կաշխատէին մօտ 4000 գործաւոր, և օրական կը պատրաստէին 30,000 փամփուշտ, ահագին քանակութեամբ վառօղ, ևւ այլն:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Հայկական կրթարանի Բ. տարեշրջանը փակելու առթիւ պարտք կը համերիմ հրատարակաւ իորին շնորհակալութիւններս յայտնել ընկերներու և ընկերութեան համար, զոր գրին իրենց պաշտօնավարութեան մէջ:

Հայկական կրթարանի Հիմնադիր-Տնօրէն Կրօն Միջազգային

Ա Ջ Դ

Յառաջիկայ կիւրակէ 9 Յունիս ընթերցասիրաց ընկերութիւնը իր ընդհանուր ժողովը պիտի ունենայ իր բաժանորդաց ներկայացնելու համար եռամսեայ գործառնութեանց տեղեկագիրք: Այս առթիւ կը խնդրուի ընկերութեանս բաժանորդներէն որ հաճին ներկայ գտնուիլ կիրակէ օր եկեղեցւոյ աւարտումէն անմիջապէս յետոյ Ազգային վարժարանի սրահը:

(Կնիք) Վարչութիւն

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Շապին-Գարահիսարի Էնտիրէս գիւղացի Յարութիւն Մօլլէնց անձը Ռուսմանիա կը գտնուի եղեր, հասցէն ով որ գիտէ կը խնդրուի որ իմացնէ խմբագրութեանս:

ՀՆԻԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏՆ ԿԱՄ ՀԱՒԱՔԱՊՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 Ֆլ. սոյն երգարանը կը ծախուի վառնա. Ա. Չարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդական եւ վիպական գրքեր. գրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյմ Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյմ երու: Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Չարպանէլեանի գրատունը եւ խմբագրութեանս մէջ:

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ. ԳՆՈՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակազուլիս, հարսանեկան հրատարակիր, մահազգ:

Գիները յոյժ զիւրամատչելի: Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

(ԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ)

Печатница Хр. Н. Войниковъ — Варна.